

ՔԱՆՈՒՄՆԵՐԻ ՍԳՐՈՒԹԻՒՆ

Նուրիսիոյ համար  
Տարեկան 12 Ֆր.  
Վեցամսեայ 6 »

Արսասահեանի համար  
Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար  
Տարեկան 3 Գր.  
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՍԻՎ ՎՃՆԻՒԻ

Նրանուցեան տար անպիսի  
երեսին համար 40 սանթիմ  
ե. իսկ վերջին երեսին համար  
20 սանթիմ ե. երեսին  
անկի անգամներու համար  
20 Օլո գեղը կը ըստայ :

# ՇՆԱԲԹ

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՖՇԱՐԹԻ ԵՒ ՇՆԱԲԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախկ և գրամ դրկի  
Խմբագրութեան հասցեին

—

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Կրթութեան և յան տրուի  
Արսասահեանի համար ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )

## ԶԻՆԱՍՏԱՆ

Հիմա էլ Չինաստանն է արեան վայրը. ուրեմն բորբոքվեց և ծայրագոյն արեւելքի հարցը որ այնքան մտատանջութիւն էր պատճառում աշխարհի գիւղամասներին. որովհետեւ ինքիւր վերաբերում է պատու պատառ անելուն այն խոշոր հողը, որի վրա ապրում է հարիւրաւոր միլիոններէ կազմված քարացած չին ժողովորդը և կարող է կատարել ընդհարման պատճառ լինել նոյնիսկ բաժանարարների մէջ :

Երկրագնդիս բոլոր աղբեցիկ և լուսաւոր համարված պետութիւնները ախորժակ ունեն Չինաստանի մի մի մասը կլանելու, ի հարկէ քաղաքակրթութեան փարական մտադրութեամբ, որը թարգմանվում է շահագործելու միտում :

Այսպէս թէ այնպէս, օտար զօրքերը խուժում են Չինաստան. ըստ երեւոյթի պետութիւնները համաձայն են գործում, արիւնը քաղաքակրթութեան և ինքնապաշտպանութեան անունով հոտում է այդ մեռելացած երկրի մէջ և պարզ է թէ Չինաստանի ապագան ներկայից շատ և շատ տարբեր պէտք է լինի :

Արդեօք այդ բաղձաթիւ միլիոններից բաղկացած ժողովուրդը ճանճի նման պէտք է կոտորվի եւրոպացիներից և իր անկախութիւնը կորցնի, թէ ցնցվելով ուժգին հարածից, զարթնի իր դարեւոր անշարժութիւնից, նոր կեանք, նոր եռանդ ստանայ և ինքնատիպ նոր քաղաքակրթութիւն սկսի :

Չինաստանի մեռելութիւնը աւածի շարքն է անցել. և զղվելի է այդ մեռելութիւնը, կանգնած ճահճային կեանքը, մարդկութեան որ ցեղի և որ ժողովրդի մէջ էլ լինի. մանաւանդ երբ յայտնի է թէ այդ հարիւրաւոր միլիոն ժողովրդի ամենախոշոր մասը սարսափելի խաւարի և թրշուառութեան մէջ է ընկղմված, մանկալի է որ այդ հարիւր միլիոններով մարդկանց կեանքը

բարեփոխվէր և բազմալի, որ այդ բարեփոխումը իրանց չինների ձեռքով լինի :

Չինական ներկայ կատարել իրարանցումի սկզբնապատճառ Պոքսէրները հայրենաւէր են երեւում. նրանց նշանաբանն է «Չինաստանը Չինների համար, մահ օտարների» : Այս նշանաբանի առաջին մասը շատ յարգելի է, բայց վերջինը գաղաւնային. որովհետեւ գէպի օտարները այդպիսի տրամադրութիւն ունենալու պատճառը միայն եւրոպացիների հարստահարութիւնը և կրօնական ոտնձգութիւնները չեն, այլ և առեւտրութիւնը գէպի ներկայ քաղաքակրթութիւնը, որը, որչափ պակասաւոր կողմեր ունենայ, յամենայն գէպի Չինաստանի համար շատ կարեւոր է և անհրաժեշտ, եթէ այդ երկրի ժողովուրդը ուզում է դեռ երկար ապրել և պատմական կործանարար փոթորիկներին դիմադրել :

Ճամարիտն ասած մեղ համար աւելի փափագելի է որ Չինացիները ստրուկ չը դառնան և ոչ մէկ պետութեան, այլ ազատվեն իրենց գարեւոր թմրութիւնից և նոր եռանդով ինքնուրոյն նոր կեանք սկսեն :

Գուցէ եւրոպացիների միահամուռ յարձակումը և վտանգը Չինաստանի վրայ այդ բարեբար պղտեցութիւնը ունենան . . .

ՎԱՐԳՕ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՕԼԻՍ, 2 Յունիս

(Շար. Ասխորդ թիւն և վերջ)

Կառավարութիւնը զգաց որ այլ եւս ինքը յաջկուեցաւ, «բաժնէ որ տիրեսոսի իր սովորական եղանակը հոս չը բանեցաւ, այն ատեն «եպիսկոպոսներու ցանկի» խնդիրը ամուր մը բռնեց :

Ասօր ալ, Սուլթանական նոր «չնորհներու» աս վերջին թուղթի մէջ ընտրութեան աս խնդրին ալ հետեւեալն է պատասխանած :

Պատրիարքարանը կամ Խառն ժողովը կը ներկայացնէ Բ. Գրան բոլոր ընտրելի եպիսկոպոսներու ցանկը, Բ. Գրանը կը սրբագրէ, կընէ իր գիտողութիւնները (այսինքն՝ կը շնչէ ամէն տանելի կամ աղէկ անձերու անունները և կը թողու միայն լրտեսներու և լիբերու անունները) և ատ ցանկի վրայ կը կատարուի ընտրութիւնը :

Հոս է այժմ միակ խնդիրը : Արթին փաշա և անոր հետ քանի մը այլ անդամներ կուզեն որ կառավարութեանը ուղած ցանկը ներկայացուեն . . .

Իսկ Օրմանեան, Ա. Կառուած չար աչքէ պահէ, աս անգամ գոնէ աւելի ազգին շահերու կողմն է, քան Տատեան Արթին փաշան :

Օրմանեան չուզեր այդ տեսակ կորստաբեր ցանկ մը ներկայացնել, այլ կուզէ 5—6 շոկուած եպիսկոպոսներու ցանկ մը կազմել և հարկը պահանջած պահուն ըսել, որ ասոնց վրայ պիտի կատարուի կիլիկիոյ ընտրութիւնը :

Եթէ Արթինի միջոցը ընդունուի և կառավարութիւնը ցանկը սրբագրէ ու կաթողիկոս ընտրէ, վաղը քիչ մը աւելի աղէկ պայմաններու մէջ կառավարութիւնը պիտի ըսէ որ 1900ի ընտրութիւնը ասանկ է կատարուեր, ուրեմն այժմ ալ ասանկ պիտի ըլլայ : Այս տեսակետով Օրմանեանի միջոցը աւելի ձեռնուռ է ազգին :

Կայսերական իրաւոյն «ցանկ մը ներկայացնել» բառերը այդպէս բացատրած է Բ. Գրանը : Բայց Օրմանեան մայիս 31ին ելլալը գնաց, նորէն աս հարցերու առթիւ Համիտի գլուխը ցատուներու :

Ատ օրը Համիտ, ո՞վ հրաշք, քիչ մը բարի «քիթ ու բերան» է ցուցուցեր իր ոտքը գացած «փափաղին» : Անմիջապէս հրամայեց որ զինուորական տուրքի բաշխման լուրը հեռագրէ իր հատին ամէն գաւառներ և հեռագիրներն ալ ձրի, ու քիչ մը տարբեր ձեւով է բացատրել իրատէի «ցանկ մը ներկայացնել» բառերը :

Համիտ ուզեր է որ ատ ընտրութեան խնդիրը շուտ մը լմընայ, այլ եւս չերկարի : Թոյլատրեր է որ Խապայեան նախագահէ, Պատրիարքարանը միջամտեր է և այլն, միայն ըսեր է որ կիլիկիոյ ընտրողական ժողովը թող ձայնից բաղմութեամբ վեց եպիսկոպոսներու անունները յանձնէ Պահապէյի, ան զրկէ հոս, կառավարութիւնը երեք անունները գուրս նետէ և մնացեալ երեքէն որը կուզեն թող ընտրեն :

Աս է Համիտի վերջին խօսքը : Կրօնական ժողովի անդամներէն լոկ երկու եպիսկոպոս գէմ են Վ. Մ. և Յ. նոյնիսկ աս ձեւին ալ, և կը պահանջեն ընտրութեան բացարձակ ազատութիւն : Արթին փաշայի յանձնուած է որ զանոնք համոզէ, Սուլթանի առաջարկած ձեւը ընդունել տայ :

Օրմանեան ալ չուզեր ատ ձեւը, այլ կուզէ որ հոս ինքը վեց եպիսկոպոսի անուն տայ և ցուցնէ որ զուր է կառավարութեան կասկածը, ընտրելի անձերը «կասկածելի անձեր» չեն : Ա՛խ, և որպէ՞ս կուզէ Օրման ինքն ընտրուիլ . . .

Խնդիրը մինչեւ հոտ է հասած հիմակ ու հիմակ : Հեռագիրներն արդէն տարին զինուորական տուրքի ներման ուրախալի լուրը, բայց նորէն կասկած մը կայ սրբախո մէջ :

Կրկին «աւազակ» տեղական թերթերը մայիս 29ին հեռագիր մը հրատարակեցին Մուշէն. թուրք զօրքեր են զրկուեր Մշոյ կողմերը երեւցած չորս աւազակներու գէմ և զօրքերը անոնց հանդիպելով Գըղը-Ալաճ հայաբնակ գիւղին քովերը՝ երկուքը սպաններ և երկուքն ալ կենդանի բռներ են : Նորէն աւազակ, ինձի կասկածելի կը թուի, և մանաւանդ թուրք զօրքին աս քաջութիւնը . . .

ՔԱՎ

—)(—)

ԵՐԿՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Եւրոպական ազգերը, առանց բացառութիւն համարելու Յրանսան, անսովոր խորհուրդներ կը տածեն այն ազգաց իրաւանց վրայ, զորս «բարբարոս» կը կոչեն. մինչ բարբարոսութիւնը համաձայնութեան (convention) խնդիր մըն է ։

Մեզ համար չինացիք «բարբարոս» ներ են, եւ չինացիք եւս այս արհամարհական յորջորջումը մեզ կը վերագրեն, ինչպէս անոնց՝ նոյնպէս մեր մէջ՝ այս կարծեցեալ բարբարոսութիւնը, արդարացեալու երեսոյթըն ունին ամեն չափազանցութիւններն. ան՝ մեզ իշխանութիւն կուտայ, մեզ՝ եւրոպացիոցս, յափշտակելու չինական գաւառներն, նուաճուած երկրի մը պէս հոն հաստատուելու. եւ անոնց ազգային կրօնքը ջնջելու յանձն առնող անթիւ միսիօնարներ պահելու ։

Ասիական շատ բնական կը գտնենք մենք ։ Աւեր փոխարէն, որ մեր կողմանէ ճշմարիտ սխալ մըն է, երբէք պիտի չհանդուրժէինք որ չինացիք Մարսէլ կամ Պէրպլինեանը գրաւէին մեզ իրենց սովորութեամբ քաղաքակրթելու պատճառաբանութեամբ, այն որ՝ սակայն՝ իրենց իրաւունքը պիտի ըլլար ։ Եւ սիրամարդի ճիգեր պիտի արձակէինք եթէ մեզ՝ մինչեւ Պուտտայի կրօնքին դարձնել ու գերուշանքերը յառաջ տանէին ։

Արդէն, մենք Փրանսացիներս, կը զարանանք եւ իրաւունք ունինք, երբ անզորացիք մեր երկրին մէջ բողոքակաճութեան պրոպագանտայի կրօնքը (Armée du salut), երբ նա հրապարակաւ ի գործ կը դնէ իր ծաղրելի եւ անմեղ, կրօնական մեծ հանդէսներն (manoeuvres) ։ Այսինքն մենք եւրոպացիքս, աւելի կ'զբաղինք ուրիշներու մօտ ընել այն բաները, զորս անոնց կարգիւնք ի գործ դնել մեր մէջ ։ Արդարեւ, անյուր անսովոր իրողութիւնն, սաստիկ զրգուած ենք սեանելով այս բարբարոս համարուածներուն ապստամբիլը մեր անխորհուրդ եւ անարդար միջամտութեանց պէմ ։ Պէտք է ինք, վերջապէս, զիբենք հանգիստ թողուլ իրենց տեղը եւ երբէք չիտանուել անոնց գործերուն որքան չեն իտանուելու անոնք մեր ինններուն ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՆԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

Արտասահմանի հայ մամուլին հիմնուելէն ի վեր շատ քննադատութիւններ եղան անոր վրայ ։ Հեղինակաւոր գրիչներ իրենց տեսութիւնները պարզեցին, ան՝ օգուտները, աւաւելութիւնները թուեցին եւ յայտնեցին իրենց դիտողութիւնները անոր ուղղութեան վերաբերմամբ ։ Այս պարբերական քննադատութիւնները անհրաժեշտ է ին ու են դեռ, որովհետեւ արտասահմանի հայ մամուլը, իր սանձարձակ ազատութեան մէջ, թերեւս պիտի մոռնար իր կոչումը, եթէ անկեղծ սրտերու զգոհ զարթոյթը մերթ ընդ մերթ չի ստրկէր ու չի իտարազանէր զայն ։

Այդ քննադատութիւնները — անշուշտ անկեղծ ու ճշմարիտ քննադատութեանց մասին է խօսքս — շատ աւելի արդիւնաւոր պիտի ըլլային ։

ձերուն որքան չեն իտանուելու անոնք մեր ինններուն ։

Եւ այս, անարդար սարօրինակ ձեւ մըն է, մարդիկ՝ հակառակ իրենց կամաց փաղափարքները, եթէ ոչ իրենց քաղաքներն ու գաւառներն յափշտակելու ։

Մենք Ալլաւ-Լօրէնի կորուստին չենք կրնար վարժուել, եւ կուզենք որ Աննամիտք, Մալկաշներն ու Չինացիներն՝ եռանդով յանձն առնեն գերութիւն մը, զոր մեզ անտանելի կերելի է, եթէ երբէք գերմանացիներու կողմանէ զրուած ըլլար մեր վրայ ։

Արդարեւ կարծես թէ աշխարհիս մէջ շատ մը բարոյականներ կան, եւ թէ մասնաւոր ազգեր, զոր օրինակ անոնք որ մեզ անհանգիստ կընեն, մարդկութենէ զուրս կը գտնուին, անոնց զէմ ամէն իրաւունք ունիք, եւ անոնք՝ ձեզ զէմ բողոք մը անզամ չունին ընելիք ։

Արդարութիւնը, սեպհականութիւնը, կրօնքը, սպասութիւնը, անկախութիւնը անոնք բոլոր անոնք եւ խաղաղ լրբութեամբ մը անոնց զրգուած է ։

Այս ազգերը, առաջուց դատապարտուած, հայրենասիրութեան իսկ իրաւունք չունին ։ Անանոց ունեցած ինքնապաշտպանութեան իրաւունքն անզամ զրկուած են ։

Չարմազանք հազուապիս անխղճութեան որով Տօնքինցիները «սպասակ» եւ Մալկաշները «սպասակ» անուանեցին, որոնք մեզ վաճակու համար կը կուտին, մեզ, օսարն, զրգոյնը, եւ յուճարողը ։

Այս ժամուս եւս, մեր ապուլութիւնը չենք ծածկեր տեսնելով չինացիներու զէնք վերցնելու եւրոպացիները հալածանքներու համար, որոնք որսի թոչուններուն պէս իրենց հայրենի հողին վրայ իսպաղած են ։

Մենք շատ բնական կը գտնենք Չինաստանը գրաւելու, եւ որով հետեւ Չինաստան չուզեր բռնաբարութիւն անհեթեթ սքանչապուծ մը կը յայտնենք ։ Մինչեւ իսկ չինական կառավարութիւնը մեղապարտ պիտի համարենք ապստամբաց հետ մեղսակից ըլլալուն ։

Նոյնքան ծաղրական եւ աւելի աւելի կերեւէին գերմանացիք, երբ մեր ազատ-հրացանաձիգները (franc-tireur) հրացանի կը բռնէին ։

Եթէ մասնաւորուած ըլլային իւրաքանչիւր կեդրոնի համար ։

Արդարեւ, արտասահմանի հայ մամուլը, ինչպէս հայ գաղթականութիւնը, իր որոշ կեդրոններն ունի այսօր, պուլկարահայ, եգիպտահայ, ամերիկեան, եւրոպական հայ մամուլներ, որոնց իւրաքանչիւրը աւելի ազդեցութիւն ունի իր ապրած շրջանակին վրայ, քան թէ տարբեր շրջանակի մը վրայ ։

Պուլկարահայ մամուլը ասոնց մէջ ամենակարեւոր տեղը կը գրաւէ, քանի որ մեծագոյն գաղթականութեան մը հետ ուղղակի եւ ամենէն մօտիկ յարաբերութիւնն ունի ։ Եւրոպական հայ մամուլը իրեն յատուկ ազգային շրջանակ մը չունի, որուն հետ ուղղակի շփման մէջ ըլլայ, եւ ստիպուած է ուրիշ շրջանակի մը մէջ փնտռել իր կեանքն ու ազդեցութիւնը ։ Եթէ ամէն կեդրոն կարողանայ իր տեղական մամուլին մէջ անհրաժեշտ պաշարը գտնել, եւրոպական հայ մամուլը իր գոյութեան իրաւունքը կը կորսնցունէ իսկոյն ։ Արեւելի անխուսափելի անկումը ըսած իս կրնայ սպասոյց ըլլալ ։

Արդարեւ եւրոպացիք խառնուածքի ամէն զգացում կորուսած պէտք է ըլլան, խստիւ թշնամանելու, չինական կառավարութեան ընթացքը, ստարին զէմ եղած ազգային շարժումը պաշտպանելու համար ։

Եթէ կա՛յ աշխարհի վրայ սրբազան իրաւունք մը, հայրենասիրութեան իրաւունքն է այն, եւ շատ սարօրինակ պիտի ըլլար «բարբարոսութիւն պատարակին սակ», ներդաշնակ եւ պատշաճաւոր բառայս իրաւունքը զլանալ նոյն իսկ ամենէն վայրենի մարդոց ։

Եղջերուն կրնայ արդարանալ իր որջը պաշտպանելուն, եւ մարդը, որովհետեւ ձեր գոյնէն տարբեր է, թէպէտեւ միեւնոյն Աստուծոյ զուակըն է եւ ձեր եղբայրը, յանձն պէտք է՝ առնէ ամենսարքազան առանձնաշնորհութեանց ամբողջովին ջնջման, իր անձին եւ հայրենեացը ունեցած պարտականութեանց, վասն զի աւելի զօրաւոր էք, աւելի անհոգ եւ նուազ խղճամիտ . . . Եւ բոլոր ասոնք մի միայն սեւ, կարմիր, կամ դեղին ծնիլու յանցանքը գործած ըլլալուն համար, այնպէս չէ՛, քանի որ զուք ձերմակ էք, եւ մանաւանդ որ հարստութիւն ունի զոր զուք յափշտակելու հաճոյքը կուզէք վայելի ։

Երբ խնդիրը սեւերու, Մալկաշներու եւ Չինացիներու վրայ է, մենք եւրոպացիքս, կրնանք թէ կերպ բարոյական կայ, մին որ մեզ կիրաւանենք, եւ երկրորդ մը որ արտաձեւու կը ծառայէ ։ Մերը շատ անձուկ է, իսկ փափուկ եւ անհանդուրժելի միւսը՝ այնքան ընդարձակ է որ սահման չունի, եւ կերթայ մինչեւ ժողովրդոց ստացուած փին յափշտակման եւ անոնց խոչնդման ։

Կերմանացիին համար Ալլաւ-Լօրէնցին ապստամբ մըն է, ինչպէս իսլամացիին եւ բոլոր անզորացիին համար, նոյնպէս Տագալը՝ ամերիկացիին, հայր թուրքին եւ պոլոնիացիին՝ ուստին համար ։

Անոնց արգիւտուած է հայրենիքն սիրել եւ պաշտպանել, եւ ինչ որ մեզ է անոնք, առաքինութիւն մը կը ըլլայ մեզ համար ։ Ընթացող անխնայականութեան եւ մտամոլութեան ամենէն շայտնական է այս ։

Ուստի պուլկարահայ մամուլին վրայ լուրջ եւ անաչառ քննադատութիւն մը իր շատ օգտակար կողմերը կուտենայ, թէ՛ հայ մամուլին համար եւ թէ՛ անոր ազդեցութեան ենթարկուող հասարակութեան համար ։

Իմ գիտաւորութիւնս այդ քննադատութիւնն ընել չէ՛, երկար աշխատութեան ու արամազրելի ժամանակի պէտք ունի ան ։ Բայց գոնէ յատկանշական կէտ մը կուզեմ երեւան հանձն, որ թերեւս շատերու ուշադրութեան վերայած է ։

Պուլկարահայ մամուլին ամենակարեւոր պահանջներն մէկը կը կազմէ մեր իզական սեռին անկէ բացարձակ պահէս հետո մնալը ։ Շատ անգամներ մտածմանս նիւթ եղած է այս կարեւոր պահանջն, պատճառներ փնտռել, եւ հրաւիրել մեր իզական սեռը, որպէս զիբէնքն իսկ՝ բացառել իր մեղուսացումը, ստակց որուն այդ լուսութիւնը իր աններելի գատապարտութիւնը պիտի կազմէ ։

Հայ կնոջ այս մասին ցոյց տուած անտարբերութիւնը կարելի է քանի մը պատճառներու վերաբերել, զորս պիտի պարզեմ մի առ մի, թէեւ ա-

Հարաւ-Աֆրիկէի պատերազմը եւ կաւ վերջապէս քիչ մը հասկցնելու, — այնքան ամօթալից եւ անօրէն է այն, որովհետեւ, ի մի բան, ձերմակ ցեղ մը կը հարուածէ — թէ «քաղաքակրթել» ժողովուրդ մը, զայն հափշտակելու, նուաճելու եւ խողիողելու մէջ չկայանար ։

Հայրենիքի սէրը քանի մը ժողովրդոց առանձնաշնորհումը չէ, ամենուն ժառանգութիւնն է, եւ աշխարհակալ ժողովուրդը՝ այն կեղծաւոր անօրէնութիւնը չունենալ պէտք էր անզորաբար ծաղրելու, եւ պատժելու նուաճուածին այն հայրենասիրութիւնը, զոր ինք կը դովէ եւ կը վարձատրէ իր մէջ ։

Եթէ այս աստիճան ծայրայեղութեան, աւաճ, — շատ անգամ անդորմ —, հուանութիւն կը սրտի ուրիշ ազգի մը երկիրը եւ ազատութիւնը կորցնու, առ նուազն պէտք է այդ ազգի յարգելու պարկեշտութիւնը ունենալ, երբ ան՝ իր անձնապաշտպանութեան պարտականութիւնը կը կատարէ ձեզի զէմ ։

Կողպտեցիք, նուաճեցիք զայն, յանուն զօրութեան շոր իրաւունքն առաջ կանցնի, բայց մի թշնամանէք զայն «սպասակ» անուանելով, որովհետեւ անոր հաճելի է վտանգ զնեզ, որ օտարական էք, եւ աւելի կը նախընտրէ մեռնիլ քան իր անկախութիւնը կորսնցնել ։

Թարգմ. ՅԻՍԷ

Բարիկ, 14 Յունիս

Ա Ջ Դ

Հայկական կրթարանի Բ. տարեշրջանի հրապարակային քնննութիւնը պիտի սկսին յառաջիկայ կիրակի, 18 Նոյնիս, եւ պիտի տեսնեն մինչեւ յաջորդ կիրակի, 25 Յունիս ։

Կը հրաւիրեմ պատուարժան հասարակութիւնը՝ որ բարեհաճին ներկայ գտնուիլ քննութեանց ։

Մասնաւոր հրաւիրագիր չ'ընդունողներէն կը խնդրուի իրր այն նկատել ներկայս ։

Հիմնադիր-Տնօրէն  
ԿՐՈՆ ՄԻՎԱՅԷԼԵԱՆ  
Վառնայ, 16 Յունիս  
—)(—

նոնցմէ ոչ մէկը, ինծի համար կրնայ իր լուրի մեղուսացման չքմեղանքը համարուել ։

Կամ այն է որ, կամքն ու կարողութիւնը կը պակսի հայ կիներուն, եւ կամ, հակառակ իրենց կամքին ու կարողութեան, միջավայրը ու պուլկարահայ մամուլին արդի վիճակն է որ զգուշաւոր եւ թերեւս անկամայ մեղուսացումը մը կենթարկէ զիրենք ։

Պուլկարիոյ մէջ, հայ կիներ իր գործունէութեամբ ցոյց տուած է թէ՛ երբէք կամքը չի պակսի իրեն ։ Շատ աւելի զժողովուրդի գործերու մէջ իր բաժինն ունեցած է ան, ընկերութիւններ կազմած, հանգանակութիւններ կատարած, հանդիսներ սարքած է, որոնց յաջողութիւնը թերեւս ստարակոյսի տակ պիտի մնար, եթէ ինք մասնակցած չըլլար ։

Կամքը սակայն, որքան ալ լուսն ըլլայ, բնականաբար չի կրնար ինքնին բաւել, երբ խնդիրը մամուլի մասին է, ուր ամէն գործ աւելի լուրջ ուսումնասիրութեան մը կը կարօտի, եւ ուր մարդ ստիպուած է գործունեալ տեղական շրջանակէն շատ ա-

ԿՐԻՆ ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Ահա առաջին երկուստարգ մը, որ քանի մը տարուան ընթացքին մէջ առիթ տուած է իր վրայ երկար բարակ գրութեամբ հայ մամուլի մեծագոյն մասին մէջ: Եթէ մարդ աչքի առջև ունենայ այդ ամէն գրութիւնները, պիտի շուարի մնայ, ապահովաբար, որոշ ու արդար կերպով գնահատելու Կարապետ Գալֆայանի գերասանական բուն արժանիքները, որոնք այնքան տարբեր ու հակասական գոյներով նկարուած են, գորղներու իրաքանչիւրին «ըմբռնողութեան» և «էնթրիքներուն» համեմատ:

Ըմբռնողութեան շարքով գնահատութիւն մը, եթէ նոյն իսկ պէտք եղած ճշտութիւնը չունենայ, դարձեալ աստիճան մը ներքին լինէր գուցէ, նկատելով որ գոնէ Bon sens կայ անոր մէջ, և որ և է յետին միտք հեռու է անկէ: Բայց «էնթրիքներէ» ծագած գնահատութիւն մը՝ իր յարգը կորսնցնելէն զատ, վատթարացում միայն առաջ կրնայ բերել, եթէ նոյն իսկ իրականի շրջանին մէջ լինի, ուստի բացարձակապէս եպերելի է ու նողկանքի արժանի:

Գծապատկութիւնը հոն է որ Կ. Գալֆայան, իր ծայրայեղ ու միամիտ բարութեան համար, գրեթէ միշտ շրջապատուած է եղբոր այնպիսի անբարեխիղճ անձներէ, որոնք նախ բարեկամութեան կեղծ պիմակին տակ, քննադատ են իրեն թէ բարոյապէս և թէ նիւթապէս, ու յետոյ երբ իրենց գիմակը վար առնուած է, այն ատեն ալ սկսած են ուրանալ ամեն արժանիք և բացայայտ կերպով թշնամութիւն ընել:

Արդեօք օրինակներ կուզէ՞ք:

ըսածս հաստատելու համար... Այսօր արար աշխարհ գիտէ՞ թէ Նաւարեան անունով մահաբոյժ մը ինչու համար առջի տարին չի քաշուեցաւ մամուլի բնաւի վստահութիւնը շարաշար գործածել, և Կ. Գալֆայանի նկատմամբ կարգ մը անհեթեթութիւններ գրել և մամուլի մէջ, կոչելով զայն ամենամեծ հանճարը մինչև հիմա բեմ կ'առնէր հայ եւ օտար արթնողներու մէջ, և նա Ս. Բրուլի տակ չէ՞ թէ ինչու համար Չոպանեան ըսուած խղճիկ մը անվայել բառեր գործածեց անոր դէմ իր սիրատարիկ Անահիտին մէջ, որ փոչոցի բարոյական ունի... Դեռ թուե՞մ... Բայց, ներողութիւն. նպատակ չունիմ ընթացողները ձանձրացնելու: Եթէ այսչափ ալ յիշեցի, պարզապէս կուզէի հասկցնել թէ առաջին նաւարեանի շուքած գովեստները ա՛յնքան անբարոյացուցիչ ու քննադատ եղած են Գալֆայանի, որ քան Չոպանեանի և իր ճորտերուն զրպարտութիւններն ու սպառնալիքները, երկրորդ անգամ մըն ալ ցոյց տալ հասարակութեան՝ թէ պէտք չէ հալածել սեղ ընդունիլ ամէն գրութիւն, որովհետեւ մեր ներկայ գրչակները իրենց սովորութիւն ըրած են առհասարակ կամ աստուածացնել բան մը եւ կամ ցեխերու մէջ լծաւելլ, առանց սակայն — երկու պարագային ալ — հիմնադր փաստեր մէջ բեքելու:

Գալֆայանի մասին մինչև հիմա գրուած յօդուածները, իրենց տարբեր ու հակասական գնահատումներով, բարեխաղան խառնակութեան կը նմանին, որկէ անմուրդ դուրս ելնելու համար պէտք է մօտէն ճանչցած լինել զինքը եւ որոշ կեպով ուսումնասիրած անոր ընդունակութիւններն ու պակասութիւնները կը լեցնեն շարունակաբար: Ժողովուրդը, հետու անոր մէջ իրեն մտաւոր մեղեց գտնելէ, հեղձեալ կ'անբարոյականանայ ու կը վարժուի ու եւ հանրային գործ մը քննադատելու համար, իր հակառակորդներուն անձը հասարակութեան առջև տան գնով վարկաբեկ ընելու աշխատիլ:

Բայց կը կարծէք որ մեր իզական սուր իր բաժինը չէ՞ ունեցած այս անկումին մէջ: Ո՞վ կրնայ տարակուսիլ թէ, փոխանակ արհամարհող վերապահութեամբ մը մեկուսանալու, եթէ որոշ բաժին մը գրաւած ըլլար և այլն, իր ներկայութիւնը շատ անկարգ գրչակներ պիտի սանձահարէր ու մեր մամուլին մէջ կրնայր փողոցային լուսանքները, անկող զրպարտութիւնները իր ստանձանափակութիւնը քննադատելու զի պիտի կրնային գտնել: Հակառակորդները աւելի փափկանկատ, խմբագրները աւելի խոհեմ և զգուշաւոր պիտի ըլլային, նկատելով թէ կրնարու հեռու իրենց գործը, կրնար մարդկային քաղաքակրթութեան մէջ ազնուացնողի պէտքը անհամ սեռութիւններ իր սիւնակ-

ուսուցիչ, պուլկարահայ մամուլը այսօր անբարոյականացուցիչ ընթացքի մէջ մտնուած է: Անհատական փձուն վէճեր, չարչիւր աղտոտ հարկերով յղացուած երկար պարտաւարներ, քաղաքական գաղափարներ անհամ սեռութիւններ իր սիւնակ-

ները՝ գերասանական գծուարին արուեստին մէջ, որ շատ քիչներուն կը վերապահէ յաջողութիւնը:

Քանի մը շարքով առաջ տխուր լուրեր սկսան պատիլ հոս Կ. Գալֆայանի մասին. — Իբրեւ թէ ան այլեւս հրաժարած լինէր գերասանութենէն և նպատակ ունենար քահանայանալու, և նա Բայց քանի մը օր վերջը, Գալֆայանի յօդուածը երեւցաւ «Նարժում»-ի մէջ (Տ. թիւ 224) ու խնդիրը լուրովին պարզուեցաւ: Գալֆայան, արդէն չափազանց զգայուն, սպառնալիքներու տակ կարգ մը թշնամական յօդուածներէն, իսկապէս քննադատական վիճակի մը մէջ կը գտնուէր... ուրիշ խօսքով, «Գալֆայանի հիւանդ էր, բառին ամենալայն իմաստով, թէ հոգեպէս և թէ ֆիզիքապէս», և տեսակ մը միտքակառուցութեան զոհ դարձած՝ կուզէր նոյն իսկ հրաժարիլ գերասանութենէն: Սակայն ուրախալի է յայտնել, որ այդ վիճակը իր ծանր հետեւանքները չունեցաւ խեղճ տղուն վրայ: Ընդհակառակը, ան շուտով սթափեցաւ իր թմրութենէն, և հակառակ իր ֆիզիքական խիստակար ու նիհար կազմութեան, հրապարակ ելաւ դարձեալ համալեռ խաղալու, և այս անգամ ֆրանսերէն լեզուով: Ու այդ բանն ինքնին գնահատութեան արժանի էր արդէն:

Մայիս 31-ին, Le Journal-ի շքեղ թատերաստիւն մէջ, տեղի ունեցաւ վերջապէս այն ցերեկային թեր, որ Գալֆայան իր գերասանական արժանիքը երկրորդ անգամ լինելով ցոյց պիտի տար

նոյնը պիտի ընէր, եթէ լոկ արհամարհանքի տեղ, հրապարակ իջած ըլլար և հրաւէր կարգար մամուլին ներկայացուցիչներուն սանձել իրենց գրչը: Մամուլին արդի վիճակը հայ կնոջ համար արդարացում մը չըլլալէն զատ, անոր մեղսակցութիւնը կը հաստատէ:

Եւ այս տողերը գրել ստիպուեցայ, տեսնելով որ հանրային բարեբերու այս անբարոյականացումը սկսած է մտա գտնել մեր իզական սեռին մէջ ալ, ու զեւ այսօր կը գտնուին հայ կրնար — սեռաւ, զարգացած, աղտոտաւոր սեռակէն, եւրոպան ալ պարտած հայ կրնար — որոնք տաճիկ հիւպատոսին կնկան վրայ եօթը գլուխ նարեկ կը կարգան և չորեքթաթ երկրպագութեամբ կ'աղօթին անոր անկողինն առջև, որպէս զի աղաբերքի ցաւերէն անվտանգ աղաթի, և ցիլնելէն ետքն ալ, իրենց քնքար մամուլերով բանուած օրորոցի մեծագին շորեր կը նուիրեն, ի լրումն ամէն վստութեան:

Համալեռ գերին մէջ: Ու պէտք չէ մոռնալ որ այս անգամ իր գործը լրջօրէն գծուարացած էր նկատելով որ ֆրանսերէն լեզուով պիտի խաղար և ֆրանսացիներու քննադատութեան պիտի ենթարկեր ինքը:

Անաչառ լինելու համար պիտի ըսեմ, որ Գալֆայան թէեւ կատարեալ յաջողութիւն մը չունեցաւ, սակայն իր այդ գծուարին գերին մէջէն այնպիսի ճարտարութեամբ մը դուրս եկաւ, որ իսկապէս պատիւ կը բերէր իրեն և արժանի էր ծափահարութեան:

Համալեռ իրական կեանքի մէջ իսկապէս շատ հաղուագիւտ ախպ մըն է, կամ աւելի ճիշդ, Շէքսպիրի հոգեբանական զանազան վիճակներուն մէջ ունեցած «ֆէնսմէնալ» յղացումն է ան, որ քիչերէն միայն հասկցուած է՝ իր վայրկեանական դարձգարձիկ ու հակասական երեւոյթներուն մէջ, և այն ալ միշտ մեկնուած է տարբեր կերպով, իսկապէս շար էակ մը չէ ան, ինչպէս որ կը ներկայացնեն առհասարակ ֆրանսացի ողբերգուները, այլ աւելի՛ տառապանքի զաւակն է ան, որուն ջղային պրկումները երբեմն ցաւագին կատաղութեան մը կը հասցնեն զինքը և երբեմն հիւժախտաւորի մը գունատութիւնը կուտան անոր:

Կերելի թէ Գալֆայան սկսած է արդէն լիովին ըմբռնել Համալեռը, ճշմարիտ Համալեռը, որովհետեւ շատ բնական կերպով արտասանեց անոր մեղսակցութիւնը, և անոր կեանքով ապրողի մը ընտանեկան երեւոյթն ունէր:

Ուրեմն անգամ մըն ալ յայտնի եղաւ, որ Կ. Գալֆայան ոչ միայն զուրկ չէ գերասանական բնածին յատկութիւններէն, այլ, եթէ այսպէս շարունակէ լրջօրէն աշխատիլ, ապագային կրնայ մեծ տեղ մը գրաւել գերասանա-

ւելի ընդարձակ շրջանակի մը հետ: Հոն, գաղափարի, համոզումի հակառակութիւնը, շատ անգամ խառնուած կըլլայ կոյր կրքերու պայթումի, որոնք գորղին վրայ կը պոսթկան անխիղճ կատաղութեամբ, և որոնց յաղթելու համար, աւելի սոկուն կամքի հետ, մտաւոր աւելի լայն պաշար և կարողութիւն պէտք է:

Արդեօք պաշարի ու կարողութեան պակաս է որ կը կատարէ հայ կրնար: Պուլկարիտ արտասանմանի այն երկերն է, ուր ամենէն աւելի շատ ազգային վարժարաններ կան, և հեռակարգ վարժարաններ կը պահուին, որոնց կարողութեան վրայ գոնէ պէտք չէ կատարել, և որոնք կրնան, եթէ ուզեն, իրենց բաժինն ունենայ մեր մամուլին մէջ: Իսկ անոնցմէ զատ, Պուլկարիտ մէջ, կանոնաւոր կրթութիւն առած կրնար չեն պակասի բարեբախտաբար: Միայն ֆիլիպի մէջ մէկէ աւելի տիկիներն ու օրիորդներ կան, որոնք սովորեցած կրնան շատ օգտակար ըլլալ իրենց գրութիւններով, գոնէ իրենց սեռին զատիտարակութեան գործին համար: Մեր իզական սեռին մամուլէն մեկու-

կան աշխարհին մէջ, ուր կը սիրենք յուսալ թէ գափնիներ պահուած են իրեն :

Մեզի կը մնայ առ այժմ գիշերք քաջալերել ու սրտանց յաջողութիւն ցանկալ իրեն :

ՇԱՀՐԻՄՄԱՆ

Փարիզ, 5 Յունիս

ՎԵՐՋԱՊԵՍ

Հայերէն Հոգուղի նոր գործիք . Յ. Ճանկիւլեան դադարեց կանանց ետեւը թագնված գաղտնի ինտրիգներ սարքելուց ու իմ մի ամիս առաջ, ինչպէս եւ ինքն է խոստովանում, խիստ պահանջի ( ) համեմատ հրապարակ եկաւ : Սակայն այդ արգանստեղին կրկին քաջութիւնը չունեցաւ որոշելու թէ ինչո՞ւ մէջ է մեղադրում ինձ : Ուստի այդ ինքնակոչ դատախազին հրաւիրում եմ նոյն Հոգուղի մէջ որոշ կերպով յայտարարել թէ ինչո՞ւմ է ինձ մեղադրում, որպէս զի ես էլ ըստ այնմ վարվեմ, ոչ թէ ընկերակալ կամ պատշտոնատեանի առջեւ, որովհետեւ այդ առասպելական ստանստին ես ոչ ընկեր եւ ոչ պատուար եմ ճանաչում, ( ) այլ պետական դատարանի, որը պատժում է սովորական զրպարատիչներին եւ ոճրագործներին :

Բոլորովին միայն չունեմ բանտ նստեցնել Ճանկիւլեանին, այլ մեծ փափաք՝ պետական օրէնքով իր բարոյական անկման վերջին պսակը պաշտօնապէս ճակատին փակցնել, չը նայելով որ սարսափելի սովորմաններ ունի, եւ ներել . . .

Իսկ գալով կանանց խմբի գանձապահուն եւ հաշուակալուհուն, վերջնապէս առաջարկում եմ զբանջ որոշել թէ իրենց այդ յայտարարած 507 Ֆրանկից անձնապէս իմ միջոցով որչա՞փ գումար են յանձնել անդական կոմիտէին եւ յայտարարել իրողութիւնը՝ որ ես իրենց հետ ուրիշ ոչ մի դրամական գործ չեմ ունեցել, հակառակ պարագային, ես, չը լինելով ոչ իտարային ազգասէր, եւ իրենց փաստարան «ստպիտ» Ճանկիւլեանի մը խրատներին կարեւորութիւն չը տարով, պատիւս պաշտպանելու համար, պէտք է կատարեմ իմ առաջին որոշումս՝ զբանջ դատարան հրաւիրելով, որպէսզի յստակ կերպով պարզուի թէ ես կանանց խմբի խառնափնթոր հաշիւների մէջ բաժին չունեմ : Իսկ գալով այն կէտին թէ իմ ասածներս լոկ սպասնալիքներ չեն, ինչպէս ուղղում են հասարակութեան հաւատացնել, այդ կարող են հաստատել զատի յանձնվածները, որոնք դատարանի կոչնագրերը արդէն մի շարքով է որ ստացել են :

ՎԱՐԴՈ-(ԱՐՎԱԽԻ)

—)(—

( ) Ահա խիստ պահանջը, որ զրած էի իրեն :

Պարոն Ջանկիւլեան

Ձեր գաղտնի քայլերը իմ անձս մրտնջու համար՝ բոլորն էլ յայտնի են ինձ, նոյնիսկ ձեր վերջին կարտ փոստալը Ֆրիլպէ դրած, քանի մը դաշնակցականներու կողմէ, ես գիտեմ ինչ վրիժ էք լուծում, ձեր Դիմակաւորները չը ապագրելու եւ այլն խնդիրներ են, գիտեմ նոյնպէս ձեր ամակիցները, որ նոյնպէս ցուեր ունեն, ի դուր էք մտ թ անկիւններում գործում, Սուլթանի թուրան շարժողը բաց ճակատ պէտք է կուլուղէ, իմացէք որ ձեզ բացարձակապէս արհամարում եմ :

ԴԻՍԱԿԸ ՊԱՏՈՒԱԾ

Հանրային գործ եւ ժողովուրդի շահը իմաստալից խօսքերը ազէտ մը եղած են մեր գլխուն, որովհետեւ կարգ մը բաղդախմբներն եւ միամիտ դասակարգէն յեղափոխական ճանչցուած փառասէր անձեր, այդ վեհ խօսքերը կը շահագործեն իրենց գնում հաշիւները յառաջացնելու նպատակաւ :

Պրաւունքս 45 թուին մէջ, Յ. Վ. Ճանկիւլեանի գրած «Երաշտաւորը» կարգացի որ երեւակայական ամբաստանութիւններու հաւաքածոյ մըն է : Ու այդ պարոնի գրածին հետեւելով՝ «կասկածելի անձինք, որոնք որ ըլլան, պէտք է իսկական դոյնով ներկայացնել ժողովրդին» մինչև օրերս իր հին եւ սրտակից ընկերը եղած ըլլալով հանդերձ, պարտք կը համարեմ նախ ներողութիւն խնդրել իմ Պոլկարիոյ այն բարեկամներէն, որոնք Ճանկիւլեանը ներկայացուցած եմ իբր ազնիւ հին գործիչ եւ ընկեր, եւ խորին ցուա յայտնել որ անգիտակցաբար՝ պատճառ եղած եմ զիրենք ծանօթացնել մարդու մը հետ, որուն այսօր ստիպեալ են բարեւ չը տալ :

Այս անհրաժեշտ ներողութիւնը խնդրելէս վերջը չխօսքս կուղղւմ ձեռնկիր լինանին :

Պ. դուն չէ՞ր Ըմիսներ առաջ ըսողը — «Դաշնակցութեան հետ բան մը չունիմ, իրաց այս խմբակը կուղէ նստելու սուպուրի» Դիմակաւորներու սխը հանելու համար, յետոյ Վարդօն, վերջը ընդհանուր Դաշնակցութիւնը, ես արմատիկ մ'որ անոնց ձեռքը գործիք դառնամ, անոնք լաւ մարդեր չեն :

Այսօր Պ. այդ խմբակի ձեռքը լաւ «գործիք» մը եղած ես, արդարութիւնը տարբեր գոյններով ժողովրդին ներկայացնել կը շատուցիր :

Ինչ որ ունեցել էք մինչև հիմա, երեսիս չէք աւելցած մարդ էք, եւ եթէ գիտցածներդ պահէք եւս առաւել ցած էք :

ԱՐՎԱԽԻ

Վառնա, 10 մայիս 1900

(\*) Երեւակայեցէք որ Ջանկիւլեանի վերոյիշեալ նամակը ստանալուց յետոյ՝ երես ունեցաւ առանց հրաւերի Ալիվէնցի Տ. Սաչիկ Թօճաֆեանի հետ սուենս գալ, եւ այդ Պարոնի ներկայութեամբ յայտարարել որ՝ ինքը ինձ վրայ ոչ մի վատ կարծիք է յայտնել, բացի թոյլ համարելուց, բոլորը թըշնամու գործ է, անուշ անուշ սուրճ խմեց եւ ձեռքս սեղմելով բաժանվեց . . .

Աւելորդ չեմ համարում այստեղ շեշտել եւ այն կէտը թէ ես ստոնակս բաց մի կտոր թղթի վրա էի գրել եւ ստոնակս սանոզ պարոնին յայտարարել որ պատասխան չեմ ընդունել, եւ իմ ձեռքով գրածս թուղթը անպատուութիւն կը համարեմ իր մօտ թողնելը, թող պատճէնը վերցնէ վկաներով, ինչպէս եւ արել է :

նա, մինչ այդ խմբակի գաղտնի ծրագիրը հասկնալու համար լրտես մը իսկ կարգած էիր . . .

Գալով 28 սնտուկի խնդրոյն, որ քու խելքովդ Վարդօնի զեղծմանց զլուխ գործոցը կուզես անուանել, դուն չէ՞ր որ փոխանակ լուսարանելու, խաւարեցուցիր, «խոշոր դէմքեր պիտի գրանամ» ըսելով պղտիկն ալ ձեռքէդ փախցուցիր եւ խառնափնթոր բնելով յետինն չար քան պառաջիւնը ըրիր : Կը յիշե՞ս այն իրիկունը որ «չօշափելի փաստեր ու սօքիւմաններ ունիմ» ըսելով մի քանի ընկեր ժողովի հրաւիրեցիր եւ այն եղրակացութեանը եկար որ գողութեան բուն հեղինակը Դաշնակցութիւնը ինքն է եւ հիմա ինքզինքդ Դաշնակցութեան բարեկամ կուզես ցուցնել, ահա այն օրէն կսկսիք բարոյական անկումը, եւ ինկար այն խմբակի մէջ զոր կստէիր :

Յետոյ կըսես թէ՝ Վարդօն իր «բարձրացումը քու բարեկամութեանդ մէջ կը գտնար», մոռցա՞ր քանի մը ամիս առաջ քու խառնութիւք սրճարանին մէջ, ահա պիտի բազմութեան եւ քու մի քանի բարեկամներու առջեւ քեզ արհամարող, ազդի ու դաշնակցութեան ի՞նչ ծառայութիւն մատուցիր պոռալով զքեզ խայտառակով Վարդօն, որովհետեւ միամիտ ամբոխին ինքզինքդ բան մը ցուցնել կուզէիր : Հետեւեալ օրը Վարդօն այդ ընթացքին համար բարեկամներու դանդաղողը դուն չէ՞ր, բնելով — «Վարդօն ծրագրիներս խանդարեց, ես կուզէի այն «խմբակը» ծուղակը ձգել, իսկ Վարդօն իր այս ընթացքով զիս երկու կրակին մէջ թողուց» :

Եթէ Վարդօն քննող ըլլար, այսպէս պէ՞տք էր վարուեր հետը : Կը ցաւեմ, խելճ մարդ, առջի շահածդ վերջը վրայ տուիր, Ձաքրեանի պէս : Եթէ Դիմակաւորները գրած չըլլայիր քու մասիդ ի՞նչ պիտի գրէիր : Դու գիմակդ դուն ձեռքովդ պատուցիր :

Իան մըն ալ յիշեցնեմ քեզի մեզի կուզէիր հաւատացնել թէ՝ Վարդօն Դաշնակցութենէն առանց գործ մը ընելու, ամսական հարիւր Ֆր. կրորիկ գումար մը կատանայ, աւելի լաւ չէր ըլլա՞ր որ դուն իբր պատուաւոր մարդ Դաշնակցութեան ներկայացուցիչ ըլլայիր այդ հարիւր Ֆրանկը ստանալու համար, արդեօ՞ք ստոր համար է կը պոռաս որ Վարդօն սրտաբասուի, հոգ մի բնեք, Վարդօն Դաշնակցութենէն սանդիմ մը չի ստանար, կրնաս պիւրօյէն հարցնել, ըստ վաղեմի սովորութեանդ :

Քու 15 տարուան ընկերդ, իսկ Վարդօնի տասնամեայ բարեկամը (Մ. Ա.) Մաճակ Յ. Գ. Պարոն Ճանկիւլեանի թերեւս ըսես թէ Վարդօն չի նամ է այս նամակը եւ զիս չճանչնալ ձե :

ւանաս, կարծածդ չէ՞ղք «պատուաւոր» մարդոց մէջ զրկէ ո՞նտր, ժուժի խմբագրատունը ստուգելու իմ ո՞վ ըլլալու, յոստով եմ որ չես կարծել թէ ես Վարդօնի կաշառուած եմ : Նոյն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուս զննարկատ Անխիմով յուսնիս Յին կը հեռագրէ թէ Թիէնցիներ՝ ումբակածամ են եւ մեծ վնասներ պատճառած, ոռուսաց կորուստն է եօթը սպայ եւ 150 զինուոր սպաննուած եւ վիրաւորուած, ժէնէրալ Սթէսէլը Թաքուէն զօրագունտ մը զրկած է Անխիմովին օգնելու :

Լոնոն եւ Փարիզ ստացուած հեռագրիները կը հաստատեն Թիէնցիների ազատութեան եւ Եւրոպական դեպուաններու Բէքինէն մեկնելու լուրերը :

— Սմիթալ Սէյմուր Թիէնցիներէ 8 Քրիտմէթը հեռաւորութեան վրայ չըլապատուած է չինացիներէն եւ շատ փոխաբար վիճակի մէջ : 63 սպաննուած է 200 վիրաւորեալ ունի, յաջողած է լուր զրկել Թիէնցիներ օգնութիւն խնդրել յայտարարելով որ հազիւ երկու օր կրնայ գիմանալ :

Լուր կայ թէ յունիս 12ին Թիէնցիներէն Սէյմուրին օգնելու համար ոռուս զօրք զրկուած է :

— Պոլսոյ երիտասարդ թուրքերու կեդրոնական զօմիթէն չըլաբերականով մը զիմած է դեսպաններուն, որով կը յայտարարէ թէ՝ Թուրքիոյ վիճակը անհանդուրժելի է եւ կաղաչէ բարենորոգումներ ընել, որոնք Եւրոպայի կարծիքով անհրաժեշտ են, հակառակ պարագային եթէ Եւրոպան ուշադրութիւն չը դարձնէ այդ կոչին վրայ, ինքը կուսակցութիւնը կսպաննայ այդ վիճակէն ելլալու ճարը գտնել :

— Լօրտ Բօպէրտսի զօրաբանակը եւ Պիւլլէրի նախապէս յառաջացող բանակը միացած են, որով պօէր զօրավար Տուէթի եւ Պոթայի զօրութեանց հաղորդակցութիւնը բոլորովին դադարած է : Անդղիացիք մեծ պատրաստութիւն կը տեսնան Հնդկաստանէն Չինաստան զօրք զրկելու :

— Ուրմիոյ մօտերը քրեւտերը յարձակում գործած են գերման որբանոցին վրայ, չարչարած են հայ կին մը եւ բաւական քանակութեամբ կապերու ու հազուստ յափշտակած, շնորհիւ երիտասարդ գաւառուի մը, աւազակները չեն կրցած որբանոցի վերի մասին վրայ յարձակում գործել, ուր կը գտնուին եղբր գերման վարժուհիք եւ հայ որբերը : վերջապէս մօտակայ զիլիբրէն օգնութեան հասեր են, պարսից կառավարութիւնը յետապնդիւր է աւազակները եւ քանի մը օրուան մէջ 16 հոգի ձերբակալել է : Թէհրանի գերման դեսպանը խիստ պատիժ պահանջած է այս աւազակներու համար, նոյնպէս եւ որբանոցի կրած վնասը :